

'58, '74): Թէ մին եւ թէ միւսը կը խորովեն իրենց զոհերը (334, '76): Երկուքն ալ կը ճաշակեն զանոնք սրբավայրին մէջ իսկ (320, '50, '62, '73), եւ կը սպառեն նոյն օրը (365): Եգիպտոսէ փախըստական ազգն իւր փրկութեան զատիկը կը յիշատակէ տարեւոր ոչխարով. Լուսաւորչի զաւակներն ալ նախ տարեւոր ոչխարով, ապա գառամբ կը պատուեն իրենց զատիկը (370-1): Երկուքն ալ նոյն անասնոյն սրիւնով կը ներկեն իրենց դրանց սեմերը, եւ այս նշանը կը յաւելու Հայր նաեւ իւր ճակատին ու խաչերուն վրայ՝ մեռոնին քով (378-9): Հրեայն իւր զոհերէն որոշ բաժին կը հանէ Ղեւտացւոյն, եւ Հայր մասն կու տայ իւր քահանային նոյն կամ գրեթէ նոյն ոճով (335, '51, '57, '76):

Հեթանոսութիւնն ալ, ուսկից մեր հարց դժուարին բաժանումը նկատեցինք կանխաւ (244-5), կը հասնի լեցնելու հրէականութեան թողած պակասը ձեւամուտ ազգիս, եւ մատաղի անասնոյն վրայ ժամանակ մ'որոնել կու տայ սպիտակ գոյնը (325). անոր մարմնոյն ու գլխին կը խճողէ պաճուճանաց շողշողուն կոյտ մը (343-6). եւ ճաշակողաց բաժակէն յատուկ բաժին կը հանէ մեռելոյն (363): — Այս